ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
АХАВНАТУНСКИЙ СЕЛЬСКИЙ
МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Աղավնատուն համայնք, Ն. Մաքևոսյան պող. 25, 0231.6.00.75, 37834

N Ա-133

*2011թ դեկտեմբերի « 13 »*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ*

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին որոշումը՝ կից հատվածներով և համեմատականներով, Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակիցների թվաքանակը, դրույքաչափերը հաստատելու մասին որոշումը՝ կից հավելվածներով և համեմատականներով:

Առ դիր 78 թերթ:

Հարգանքներով՝

**Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավար** **Ա. Մաքևոսյան**

ՀՀ ԱՐՄԱՎ... ...ՊԵՏԱՐԱՆ
1924-11
13 12 2011թ.

# ՈՒՂԵՐՁ

## ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Աղավնատան գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն:

Աղավնատան գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

**Աղավնատան գյուղական համայնքի 2012թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ Ընդամենը 51817.1 հազար դրամ, այդ թվում սեփական** եկամուտները՝ 14750.0 հազար դրամ:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների ծախսերի համար միջոցները՝ 600.0 հազար դրամ: Պետական բյուջեից տրամադրվող դոտացիան՝ 36467.1 հազար դրամ:

2012թվականին հարկերի և տուրքերի գծով նախատեսվել է 12600.0 հազար դրամ, որից 500.0հազար դրամ շենք. շին. գույքահարկ, 8600.0 հազար դրամ հողի հարկ և 3400.0 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ,100.0 հազար դրամ տեղական տուրքեր:

Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները: Գույքահարկը կանխատեսվել է հաշվի առնելով գանձելիության մակարդակը:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր է նախատեսվել 100.0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 36467.1 հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 2000.0հազար դրամ,տեղական վճարներ է կանխատեսվել 50.0 հազար դրամ:

Տուժ ու տուգանքներից մուտքեր է կանխատեսվել 100.0 հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան:

# ԾԱԽՍԵՐ

**Աղավնատան գյուղական համայնքի 2012թվականի բյուջեով ծախսեր են նախատեսվել ՝ ընդամենը 51817.1 հազար դրամ,**

այդ թվում՝

Ընթացիկ ծախսերի գծով՝ **51817.1** հազար դրամ:

Աղավնատան գյուղական համայնքի 2012թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում են (հատված 2,3,6):

Համայնքի 2012 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս ղեկավարվել ենք 2010-2011 թ,թ բյուջեի փաստացի կատարված, նախատեսված և 2012թ. սպասվելիք ծախսերով:

## ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 41410.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

01բաժին 1 խումբ 1 դաս ՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով ընթացիկ ծախս է նախատեսվել է 25075.0 հազար դրամ, այդ թվում՝ 650.0 հազար դրամ՝ կապիտալ ծախսեր :

01բաժին 6 խումբ 1 դաս ՝ « Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

(այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է՝ 16335.0 հազար դրամ ծախս,որից 13000.0 հազար դրամ կապիտալ ծախսեր:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ -14100.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 2 խումբ 1 դաս՝ «Գյուղատնտեսություն» ծրագրով 600.0 հազար դրամ:

04 բաժին 2 խումբ 4 դաս « Ոռոգում» ծրագրով 8300.0 հազար դրամ :

04 բաժին 5 խումբ 1 դաս՝ «ճանապարհային տրանսպորտ»ծրագրով 4000.0 հազար դրամ:

04 բաժին 9 խումբ 1դաս՝ «Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ -28000.0 հազար դրամ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 1000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 1000.0 հազար դրամ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 07 բաժին

Ընդամենը՝ 07 բաժին 6 խումբ 2 դասի ծախսեր 2500.0 հազար դրամ:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 12350.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակույթային կազմակերպություններ» ծրագրով 2800.0 հազար դրամ: Նշված ծրագրում ընդգրկվել են համայնքային միջոցառումների գծով ծախսերը:

08 բաժին 2 խումբ 7 դաս Հուշարձանների և մշակութային արժեքների կազման և պահպանման ծրագրով 1500.0 հազար դրամ:

- 08 բաժին 3 խումբ 1 դաս հեռուստառադիոհաղորդումներ ծրագրով՝ 500.0 հազար դրամ:

08 բաժին 6 խումբ 1 դաս «Հանգիստ,մշակույթ և կրոն » (այլ դասերին չպատկանող ծրագրով նախատեսվել է 7550.0 հազար դրամ ծախսեր, որից 50.0 հազար դրամ կապիտալ ծախսեր:

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09 ԲԱԺԻՆ**

«Նախադպրոցական կրթություն» ծրագրով նախատեսվել է 2000.0 հազար դրամ նախադպրոցական խմբերի պահպանման ծախսեր:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ**

**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 5000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ**

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ « Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 5000.0 հազար դրամ:

Ծրագրում ընդգրկվել են թաղման ծախսերի մասնակի հատուցման, սոցիալապես անապահով խավերին օգնություն տալու համար ծախսերը: Օգնությունները տրվում են սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա,կատարված եզրակացությունների համաձայն, համայնքի ավագանու որոշմամբ:

**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ**

**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2157.1 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ**

11 բաժին 1 խումբ 2 դաս՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 2157.1 հազար դրամ: Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել տվյալ տարվա չնախատեսված ծախսերի համար՝ համայնքի ավագանու որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Աղավնատուն համայնք, Ն. Մաթևոսյան պող. 25, 0231.6.00.75, 378343

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 12 » Դեկտեմբերի 2011 թվականի թիվ 8 նիստի N 2-Ն

## ՈՐՈՇՈՒՄ

## ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ « ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ և ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներից

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի, « Կրթություն մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակիցների թվաքանակը և աշխատավարձի դրույքաչափերը՝ համաձայն՝ հավելված 1, 2
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավար՝ /Ա. Մաթևոսյան/

Իսկականի հետ ճիշտ է

Աշխ. քարտուղար Ա. Պարսամյան

2011թ Դեկտեմբերի « 12 »
գ.Աղավնատուն

Հավելված 1
Արմավիրի մարզի
Աղավնատան գյուղական
համայնքի ավագանու
2011թ. դեկտեմբերի 12-ի
N 2-Ն որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | 2012թ հաստատված | | |
|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնի դրույքաչափը |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 160000 |
| 2 | Համ.ղեկ.տեղակալ | 1 | 100000 |
| | | | |
| | Ընդամենը | 2 | 260000 |
| | | | |
| 1 | Ղեկ.աշխատ. քարտուղար (1.2.1) | 1 | 125000 |
| 2 | Գլխ. մասնագետ ( 2.3.1) | 1 | 120000 |
| 3 | Առաջատ.մասնագետ (3.1.1) | 1 | 90000 |
| 4 | Առաջատ.մասնագետ (3.1.2) | 1 | 90000 |
| 5 | I-ին կարգի մասնագետ (3.2.1) | 1 | 80000 |
| 6 | I-ին կարգի մասնագետ (3.2.2) | 1 | 80000 |
| 7 | II-րդ կարգի մասնագետ (3.3.1) | 1 | 79000 |
| | | | |
| | Ընդամենը | 7 | 664000 |
| | | | |
| 1 | Վարորդ | 1 | 80000 |
| 2 | Գործավարուհի -քարտուղարուհի | 1 | 60000 |
| 3 | Հավաքարար | 1 | 40000 |
| | | | |
| | Ընդամենը | 3 | 180000 |
| | | | |
| | Ամբողջը | 12 | 1104000 |

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատան գյուղական
համայնքի ավագանու
2011թ. դեկտեմբերի 12-ի
N 2-ն որոշման

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ »ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | 2012թ հաստատված | | |
|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միվոր | Պաշտոնի դրույքաչափը |
| 1 | Տնօրեն | 1 | 60000 |
| 2 | Գրադ.վարիչ | 1 | 45000 |
| 3 | Գլխ.հաշվապահ | 1 | 45000 |
| 4 | Գեղմասվար | 1 | 40000 |
| 5 | Մասն.մեխանիկ | 1 | 35000 |
| 6 | հրահանգիչ-խմբավար | 1 | 35000 |
| 7 | Օժանդ.բանվոր | 1 | 35000 |
| 8 | Հավաքարար | 1 | 35000 |
| 9 | Պահակ | 1 | 50000 |
| | | | |
| | Ընդամենը | 9 | 380000 |

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | 2011թ հաստատված | | | 2012թ նախատեսված | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնային ամսական դրույքաչափը | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնային ամսական դրույքաչափը |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 160000 | Համայնքի ղեկավար | 1 | 160000 |
| 2 | Համ.ղեկ. տեղակալ | 1 | 100000 | Համ.ղեկ.տեղակալ | 1 | 100000 |
| | | | | | | |
| | Ընդամենը | 2 | 260000 | Ընդամենը | 2 | 260000 |
| | | | | | | |
| 1 | Ղեկ.աշխատ.քարտուղար (1.2.1) | 1 | 125000 | Ղեկ.աշխատ. քարտուղար (1.2.1) | 1 | 125000 |
| 2 | Գլխ.մասնագետ ( 2.3.1) | 1 | 120000 | Գլխ. մասնագետ ( 2.3.1) | 1 | 120000 |
| 3 | Առաջատ.մասնագետ (3.1.1) | 1 | 90000 | Առաջատ.մասնագետ (3.1.1) | 1 | 90000 |
| 4 | Առաջատ.մասնագետ (3.1.2) | 1 | 90000 | Առաջատ.մասնագետ (3.1.2) | 1 | 90000 |
| 5 | I-ին կարգի մասնագետ (3.2.1) | 1 | 80000 | I-ին կարգի մասնագետ (3.2.1) | 1 | 80000 |
| 6 | I-ին կարգի մասնագետ (3.2.2) | 1 | 80000 | I-ին կարգի մասնագետ (3.2.2) | 1 | 80000 |
| 7 | II-րդ կարգիմասնագետ (3.3.1) | 1 | 79000 | II-րդ կարգի մասնագետ (3.3.1) | 1 | 79000 |
| | | | | | | |
| | Ընդամենը | 7 | 664000 | Ընդամենը | 7 | 664000 |
| | | | | | | |
| 1 | Վարորդ | 1 | 80000 | Վարորդ | 1 | 80000 |
| 2 | Գործավարուհի - քարտուղարուհի | 1 | 60000 | Գործավարուհի -քարտուղարուհի | 1 | 60000 |
| 3 | Հավաքարար | 1 | 40000 | Հավաքարար | 1 | 40000 |
| | | | | | | |
| | Ընդամենը | 3 | 180000 | | 3 | 180000 |
| | | | | | | |
| | Ամբողջը | 12 | 1104000 | Ամբողջը | 12 | 1104000 |

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ»ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | 2011թ հաստատված | | | 2012թ նախատեսված | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնային դրույքաչափը | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնային դրույքաչափը |
| 1 | Տնօրեն | 1 | 60000 | Տնօրեն | 1 | 60000 |
| 2 | Գրադ.վարիչ | 1 | 45000 | Գրադ.վարիչ | 1 | 45000 |
| 3 | Գլխ.հաշվապահ | 1 | 45000 | Գլխ.հաշվապահ | 1 | 45000 |
| 4 | Գեղմասվար | 1 | 40000 | Գեղմասվար | 1 | 40000 |
| 5 | Մասն.մեխանիկ | 1 | 35000 | Մասն.մեխանիկ | 1 | 35000 |
| 6 | Խմբավար | 1 | 35000 | հրահանգիչ-խմբավար | 1 | 35000 |
| 7 | Օժանդ.բանվոր | 1 | 35000 | Օժանդ.բանվոր | 1 | 35000 |
| 8 | Հավաքարար | 1 | 35000 | Հավաքարար | 1 | 35000 |
| 9 | Պահակ | 1 | 50000 | Պահակ | 1 | 50000 |
| | | | | | | |
| | Ընդամենը | 9 | 380000 | Ընդամենը | 9 | 380000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Աղավնատուն համայնք, Ն. Մաթևոսյան պող. 25, 0231.6.00.75, 378343

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » Դեկտեմբերի 2011 թվականի թիվ 8 նիստի N 3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### *ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
### *ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն՝ եկամուտների մասով՝ 51817.1 հազար դրամ, ծախսերի մասով՝ 51817.1 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների, համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել բյուջեի ծախսերը ըստ ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/, համաձայն հատված 4-ի:

6. Յաստատել բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները, համաձայն հատված 5-ի:

7.Յաստատել բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:

8. 2012 թվականի բյուջեով նախատեսված ապրանքների , աշխատանքների և ծառայությունների գնումները մինչև հայտարարված նպատակային մրցույթների արդյունքում պայմանագրերի կնքումը իրականացնել բանակցային ընթացակարգով առանց հայտարարության եղանակով :

9. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեի հատվածում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելու :

10. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելու :

11. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50% չափաքանակ :

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ՅԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավար՝ /Ա. Մաքևոյան/

Իսկականի հետ ճիշտ է

Աշխ. քարտուղար Ա. Պարսամյան

2011թ Դեկտեմբերի « 12 »
գ.Աղավնատուն